



ՍԵՆԵԿԱՊԱՆՍՍ յանկարծակի պակսեցաւ ու տագնապի մատնեց զիս: Քաղաքացւոյ շահադիտութիւնը լաւագոյն զբաղանք մը որոնել տուած էր իրեն՝ լռելեայն: Քստած էր ու շտապով կանչուած: Երեկոյին իմացուց և առաւօտուն մեկնեցաւ: Ամենէն համառօտ ու գործնական կարգադրութիւնը:

Խորհեցայ՝ թէ գիւղը կրնար տալ ինձ պարգաւիտ՝ բարի պատանի մը՝ որ չի մատնեք զիս. զոր կը կրթեմ՝ կը դաստիարակեմ, և օգտակար կ'ընեմ ինձ և իրեն: Իջայ ելեկտրական հանրակառքէն. թափառեցայ դռնէ դուռ՝ ձմեռնային տղմուտ ճանապարհաց ու տամուկ արահետներու միջէն, սենեկապանիս հետ խուզարկելով յիշատակները դալար հասակիս՝ որ ի հովոց կու գար հոն: Հասայ իւր տունը, հանրակառքէն քանի մը քալլ հեռի, առանձնացած պարտիզաց մէջ՝ ինչպէս ճգնաւորի մը խրճիթը մննասէր: Հին շէնք մը՝ թուխ որմերով, փոքրիկ պատուհաններով, զոր չէր բնաւ զգուած արուեստին ձեռքը խրչանաս:

Կեցած էր նա աղբիւսի բլրակի մ'առջեւ, ու երկժանով սայլակին վրայ կը դիզէր աղբէն՝ տանելու ցանելու դաշտերուն վրայ, ի պատրաստութիւն մօտալուտ զարնան: Բարեկցի. և նա երկժանին յեցուց սայլակին և ինձ դարձաւ: Հագած էր գորշ զգեստ մը. շագանակագոյն աղճատ զըլխարկ մը զլխին. կարճ թիկնազգեստիկը թողած առանց կոճկելու. թուխ վզնոց մը պատած պարանոցին. սրունքները պրկած գորշ սոնապաններու մէջ, և փայտանբրան սանդանքն ոտներուն: Ձեռները, որոց վրայ ընկած կորիկը շարաթէ մը պիտի ծլէր, խրեց զբալանները: Պարզուկ ժպիտ մը ծաղկեցաւ կարմիր կայտառայտերուն վրայ, որոց վրայ կը շողային տառնուեթ զարուհներ և զոյգ մը բարի ուշիմ աչքեր:

— Կ'ուզե՞ս սենեկապան գալ մեր վարժարանը:

— Այո՛, — եղաւ պատասխանը շուտով:

Երեք օրէն՝ ծրար մ'անթին ներքեւ, ներս մտաւ վարժարանին դռնէն նոր սենեկապանս, այն տարագով որով հանդիպած էի աղբիւսի բլրակին առջեւ, և սկսաւ սպասաւորութիւնը:

— Ճաշակաւոր պատանի մ'է. կիւրակէ օր տեսնես զինքը, չպիտի ճանչնաս. շատ կոկիկ կը հագնի, — ըսած էր ինձ՝ զայն յանձնարարող ծեր գիւղացի մը: Անցան օրեր ու շաբաթներ՝ կիւրակներով հանդերձ, և անոր կոկիկ հագուստը դուրս չելաւ ծրարէն. բնաւ չբացաւ զլուխը, չկոճկեց թիկնազգեստիկը, չազատեց իր սրունքները սոնապաններէն, չքակեց փողպատը վզէն, չհանեց ձեռները զբալանէն: Մեր պատասպարուած որմերէն ներս կը կարծէր լսել դաշտի հովին սոյլերը, ընդունել բուրին խայթոցները:

Վարժարանին ողորկ փայլուն յատակները ծածկուած կը ֆնային փոշւոյ ներքեւ. խառնակութիւնը կը տիրէր վառարանիս շուրջ, ունեկին ու փայտերը խառնափնդոր ձգուած գետնին վրայ: Անդադար կ'ազաւորէի իրեն քաղցրութեամբ, հաստաւապէս միտքս դնելով համոզել՝ կրթել զինքը, բնտանցնել վայելչին ու գեղեցկին: Իւր գալէն վերջ յատակին վրայ թուրքը կը տեսնէի, էւ երբ օր մ'իրապէս ալ բռնեցի զինքը նոյն պակասութեան մէջ ու դիտողութիւն ըրի, պատասխանեց զարմացմամբ խառն ժպիտով մը. — Ուրեմն պէտք չէ՞ թընել:

Երկու շաբաթն անգամ մը տուն կ'երթար. և ի դարձին կը պատմէր զմայլմամբ՝ իւր վայելած ուրախութիւնը զինեւանց մէջ, իւր խաղացած պարերը գիւղին աղջկանց հետ, իւր խոճկորներուն կնիչներ, հաւերուն կարկաչն ու համեղ ձուերը:

Սր մը պատահմամբ իմացայ՝ որ կարգաւ չէր գիտեր: Շատ տարօրինակ թուեցաւ ինձ: Կանչեցի սենեակս, ակնոցս վարդի, լուրջ դէմք մ'առի և ըսի. — Տղաս,

պէտք է գիտնաս՝ որ թու գիւղէն ու պարտիզէն դուրս աշխարհ մ'ալ կայ: Շատ ընդարձակ է այն, և բաց նաև թու առջև ինչպէս ամենուն: Ե հոն մտնելու համար շատ բան կայ սովորելի՛ք՝ մարդուս անհատական և ընկերական կենաց վերաբերմամբ, ինչ որ կարգալով կը լինի: Պէտք ունիս տակաւին մտաւոր ու հոգեկան զարգացման, թու կատարելութեանդ, որ առանց ընթերցման չի ստացուիր: Երբ օր մը հեռանես գիւղէդ այնչափ՝ որ չկարենաս տասնուհինգ օրն անգամ մը վերադառնալ, պիտի ստիպուիս գրով հաղորդակցիլ ընտանեացիդ հետ: Գիրը հարկաւոր պիտի լինի քեզ նաև օտարաց հետ յարաբերութեանց համար: Կեանքդ բարգաւաճելու, շահդ ապահովելու անհրաժեշտ գործիքն է գիրն ու հաշիւը: Այս քաղաքին փողոցաց մէջ շրջելու համար անգամ հարկաւոր է կարգալ գիտնալ, խօսած լեզուդ իտալերէն է, շինական է, և զոր մաքրելու ես ընթերցմամբ, եթէ չ'ուզես ընկերութեան հաճելի լինել: Մինչդեռ վարժարանիս մէջ ես, օգտուէ առթէն, և ես պատրաստ եմ գիր սովորեցնել քեզ: Կը հաւանիս:

Ունկնդրեց այնպիսի ուշադրութեամբ մը, որ իւր հատուկման մասին որ և է կասկած չէր թողուր: Ե ընդունեցաւ առաջարկս: Ուրախ այն գիտակցութեամբ՝ թէ սոքեւ մը պիտի լուսաւորէի, փութացի իտալերէն հեզարան մը գնել, ու սկսայ դաս տալ: Իւրաքանչիւր էջ սահմանուած էր մէկ տառի վարժութեան, որ յիսուն անգամ կը կրկնուէր կարճ բառերու մէջ: Յիսուն անգամ կը հնչէի զայն, և Տոնի յիսուն անգամ կը մոռնար: Չայնաւորը չէր յաջողեր կապել բաղաձայնին հետ: Իրեն ընտանեկոյն բառերն անգամ՝ զոր կը կարդացնէի հեզարանին մէջ, չէր հասկանար: Զոր օրինակ հեզել տուի հաց բառը, և հարցուցի. — Ի՞նչ բան է: — Ակնարկը սեւեռեց աչքերուս մէջ, ջանալով անկից որսալ բառին իմաստը: Զէր կրնար երեւակայել՝ որ իւր կերած հացը նոյն լինէր հեզարանի բառին հետ: գիրն աւելի բարձր բան մը նշանակելու էր: — Բայց դու հաց

չես կերած քնաւ, — պատասխանեցի: Երիժող մ'արձակեց, զարմացած՝ թէ ինչպէս իւր ընտանին խոշոր հացն ամփոփուած էր այդ փոքրիկ բառին մէջ:

Չվհատեցայ: Եկաւ երկրորդ դասին, երրորդին: Յաջորդ դասին՝ նախորդը բուրովին շոգիացած էր ուղեղէն, և հարկ էր կրկնել: Զգացի՝ որ դերս շատ դժուարին էր, բայց ոչ լեռեցիչ. վերջապէս արթուն պատանւոյ մը հետ էր գործս: Յաղթանակի փափաքը զօրացուց զիս, բայց յոգնեցուց զՏոնի՝ որ սկսաւ դասի պահուն յօրանջել, ու դասի չափ՝ մինչև որ ես չկանչէի. շատ յոռի նշան մ'իմձ համար: Խորհեցայ զբքէն դուրս ալ կրթութեան հրապուրիչ առիթներ ընծայել իրեն: Թատերական հրահանգիչ ներկայացում մը կար. առաջարկեցի երթալ. չմերժեց, բայց յետոյ իմացայ՝ որ չէր գնացած:

Իւր գիւղն իտալիոյ հեռաւոր ու մութացումը մէկ անկիւնը չէր գտնուեր: Միջակէտն էր գեղեցիկն վիեննական և համալսարանական Պատաւիտին, մէկ ժաւով միայն հեռի մեկէն ու միւսէն: Իւր հայրենի տնէն քանի մը քալ հեռի կը սուրային շաչելով՝ ելեկտրական հանրակառքը, ինքնաշարժը, հեծանիւր: Իւր նսեմ ընակարանին դրացի, նստած էին քաղաքացուց մաքուր ամառանոցները: Բուրն ալ միջոցներ յորդորելու գինըը զարգացման. սակայն ինք բաժին ընտրած էր ագիտութիւնը: Մեր վարժարանի մտաւոր մթնոլորտը, տիեպղեան պերճ առաստաղները, ոսկեղորուզ ու սպիտակ նուրբ քանդակները, արքեմի վեհութիւնը քնաւ հրապուրչ չաղջեցին իրեն, քնաւ չցնցեցին իւր ջղերը: Անծանօթ քաղաքակրթութեան մ'անխափստ հեթեթեմքն, և որիւր ոչինչ:

Անցաւ ամիս ու կէս: Առաւօտ մ'եկաւ իմանալու՝ որ յաջորդ օրն՝ ամառալուսի՝ պիտի թողուր մեր վարժարանը և երթար: Իւր ունեցները կարօտացեր էին աղբիւսի հեշտ բուրուփներուն, իւր ականջները՝ խոճկորներու կնչիւնին, իւր քիմքը՝ գինեւտան մրուրին, իւր գրիւը՝ գեղջկուհեաց պարերուն: Պատասխանեցի՝ թէ ըստ մեր

պայմանին պէտք էր տաւանահինգ օր ժամանակ տալ ինձ, որպէս զի իրեն յաջորդ մը գտնէի: Բնա՛ւ՝ թէ մերձաւոր տօնին համար զօրօման ժամադրութիւն տուած էր իւր գլուխը ընկերացի: Պնդեցի իմ պահանջիս վրայ, ջանալով զգացնել այն նեղութիւնը՝ օրուն կը մատնէր զիս, ընկերական պատշաճութիւնները, զօրօմանց անթիւ: Խորթները զոր ունէր յետոյ. և նա ելաւ սենեկէն համոզուած: Կէս ժամ վերջ իմացայ՝ որ արդէն մեկնած էր, առանց ստանալու թողակն իսկ: Միասին տարած էր հեզարանն ալ. գուցէ տարտամ յիշատակ մը հապճեպ անցման հայ վարժարանէ մը, և զարգացման անպտուղ ջանքի մը:

Վեց տարիներ սահնի անցեր էին այդ օրէն: Տոնի, հիմայ կորովի երիտասարդ մը, իւր կարշնեղ բազկաց ոյժը կը զուգէր իւր եզանց ամուլին պինդ ջղերուն հետ, ու կը պատէր հողը, ճակատէն ծորած կայլակներովը թրմելով զայն: Կ'ապրէր զուարթ ու խաղաղ, և կը սնուցանէր իւր փոքրիկ ընտանիքը: Բաց երկինքը, իւր անշուք գիւղը, հին տնակն ու փոխինդը շնորհած էին իրեն այն երջանկութիւնը, զոր Դըստերու պերճ ուստանը, Ջենոբեան շքեղ պալատն ու հեզարանը, մոռցուած այժմ իւր տան մէկ խորշին մէջ, զլացած էին: Գոհ էր իւր վիճակէն այն գոհութեամբ՝ որ հիմն է ամէն երջանկութեանց. ինչ պէտք ուսման ու քաղաքի:

Տօնական օր մ'էր: Շինականը հաւաքուած էին զինետան մը մէջ, Բարձրաձայն ծիծաղելով, թղթախաղ ու երգեր, զինելից շիշերու և գաւաթներու շուրջ: Ներս մտաւ անձանթի երիտասարդ մը, նստաւ սեղանի մ'առջև, ու շիշ մը զինի բերել տուաւ: Կէս շինական զգեստի մը մէջ պատած էր վտիտ մարմին մը. աւարտած ախտահիւժ զէմքով մը՝ որոյ վրայ դառնութիւն և ատելութիւն մարմնացած էին: Իւր նենգաւոր աչքերը շրջեց ներկայից վրայ, գննեց միջավայրը: Ապա բռնազօր ժպիտ մը ցանկելով երեսի կանխահաս խորշումներուն վրայ, խօսք ուղղեց

մերձակայից. ընտանեցաւ, հարցափորձեց անոնց կեանքը, ապրուստը. իրեն դարձուց ամենուն ուշադրութիւնը: Յետոյ ելաւ կանգնեցաւ. և խոր կարեկցութեամբ մը լեցուած անոնց տածանակիր կենցաղավարութեան վրայ, սկսաւ շանթեր արձակել ընկերութեան անիրաւ կարգերուն դէմ. հարուստներուն՝ որ կենաց բոլոր դիւրութիւններն իրենց սեպհականներ էին, զրկելով զիւրացին ու զործաւորը. օրինաց և իշխանութեանց դէմ՝ որ կը կաշկանդէին մարդկային ազատութիւնը և կը պաշտպանէին զրամատէրերը: Իւր կմախք բազուկը զարկաւ սեղանին, որ ուժգնապէս ցնցուեցաւ, ու զոռաց.

— Այդ հողերը՝ որոց վրայ կը չարչարուիք, ձեր քրտինքով շահեցուցեր էք ձեր տերանց....

— (Բայց հագիւ ութ տարի յառաջ վարձեց հայրս մեր կալուածը. յառաջ քաղցած էի, հիմայ կուշտ, — կը խորհէր Տոնի՝ որ նստած էր հոն):

— Ձեր աշխատութեամբ հարստացած են անոնք, ձեր արիւնը կը ծծեն և դուք չէք զգար....

— (Բայց տէրս շահածիս մէկ երրորդը հագիւ կը տեսնէ, — կը պատասխանէր Տոնի):

— Ով որ կ'աշխատի հողին վրայ, նա է անոր տէրը. և դուք պէտք է որ բռնաւորաց ձեռքէն յափշտակէք ձեր իրաւունքը, փոխանակ անոնց ստրուկ մնալու: Հողն ու ամբողջ եկամուտը ձերը լինելու են: Միացէք մեզի հետ, տապալէնք հին անիրաւ կարգերը, բարեփոխենք ընկերութիւնը, փրկենք իւր հարստահարիչներէն, հաստատենք ճշմարիտ քաղաքակրթութիւնը....

Կ'որոտար ու կը շանթէր յեզափոխականը, և գիւղացիք յափշտակուած կ'ունկնդրէին: Յանկարծակի կալուածատէ՛ր դառնալ. ինչ գեղեցիկ գաղափար, կ'ըսէր զինին՝ որ կը դառնար անոնց ուղեղին մէջ: Սակայն ինչպէս գործադրել: Ազատագրութեան առաքեալը բացատրեց ու կազմակերպեց: Որոշեալ օր մը բոլոր մշակները պիտի հաւաքուէին, զինուած իրենց ման-

գաղնեբով ու բահերով, և հռչակէին իրենց իրաւունքը հողերուն վրայ:

Հասաւ այդ օրը, արդարութեան ու քաղաքակրթութեան յաղթանակին այդ մեծ օրը: Բայց իրաւունքը՝ խօսքով ու բռնութեամբ միայն չի տեղափոխուիր: Եւ արդարութեան պաշտօնեայք պատրաստ էին ցուցնելու՝ թէ ուր է այն: Անհրաժեշտ բախումը տեղի ունեցաւ, և խուժանային շարժումը խեղդուեցաւ արեան մէջ: Տգիւտութիւնը կը քաւէր իւր անհանճար դաշնակցութիւնը չարութեան հետ:

Արեւ դեռ նոր մտած էր: Գիւղին անշուք տնտիւներէն միոյն մէջ կը բացուէր հին սենեակ մը: Մըտտ առաստաղ, մըտտ պատեր՝ որոց զարդերն էին քանի մը պղնձեղէն սեցած անօթներ: Մեկուսի՝ մըտտ սեղանի մը վրայ կը հանգչէին զոյգ մը կիսամաշ զատարկ պնակներ: Միւս կողմ՝ հնոտի ակութ մը՝ բրգածե ծխանին ներքեւ, որոյ մէջ ձգուած կը մնային քանի մը կիսայրեաց խանձողներ, զուրկ կենդանութեան կայծէ մը: Սենեկին

մէկ անկիւնը ճղօրի մը վրայ ընկած էր մանկամարդ կին մը՝ որ կը դիեցնէր իւր մանկկը: Թուի լաշակ մը կը ծածկէր իւր գլուխը, և ջերմ կայլակներ կը զլուէին աչքերէն՝ մանկան փափուկ շրթանց վրայ, որ կաթին քաղցրութեան հետ կը սկսէր ճաշակել՝ անգիտակցաբար՝ ցաւին դառնութիւնը: Տոնիի ալրին էր: Սուգին մոայլը կը պատէր իւր սիրտը, ինչպէս երեկոյի ստուերը կը տարածուի հովտին վրայ, և զոր անմեղ ժպիտն հոգւոյ հատորին, կպած իւր լանջաց, չէր յաղդեր ամոքել: Այդ ժպիտը՝ ծաղիկ մ'էր միայնիկ աւերակին մէջ, և այդ սիրտը շիջած յաւերժաբար՝ ինչպէս ակութը մերձաւոր, որպէս զի իւր դերերկին վրայ բարձրանար ակտաբոյժ ամբարտաւանի մ'աթոռը լըրբենի:

Ու սենեկին մթամած լուծեան միջէն կը բարձրանար մերթ ընդ մերթ հեծուծիւն մը, սրտակեղեք հառաչանք մը, անէծք մը: Բողոքն էր զոհին:

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՏՈՒՆ

— Հաճութեամբ կը փութանք ուղղելու ակամայ վրիպակ մը Պարոն Թորգոմ Ղազարոսեանի ծննդեան տարեթուոյն նկատմամբ, որ է ճիշդն 1890 և ոչ թէ 1880, ինչպէս տպուած է «Բազմավէպ»ի Յուլիս-Օգոստոս թիթ. մէջ: Ընդ նմին ուրախակցութիւննիս կը յայտնենք ճարտ. Պարոն Թ. Ղազարոսեանին, Պելճիոյ աւերութեան կողմէն «Մեղայլ դ'իդէր» պատուանշանին արժանալուն համար.

ԻՄԲ.

Կը վաճառուի Հին Հայաստանի փոքրագիր քարտէսն կազմուելիք Նոր Հայաստանի սահմաններու գծերով առ ի փորձ գունաւորած. առանձինն՝ զինն է ֆր. 1.50. — գումարով՝ սկսած տասէն և ի վեր, 10% զեղչով:

ՏԵՍԶ. ՏՊ.